

Համայրը
Տիպը Համաձայնագիր
Սկզբնաղբյուրը ՀՀԱԳՆՊՏ 2016.07.13/1(35)
Ընդունող մարմինը Հայաստանի Հանրապետություն
Ստորագրող մարմինը
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 15.02.2016

Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Պեկին
Ընդունման ամսաթիվը 25.03.2015
Ստորագրման ամսաթիվը 25.03.2015
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԱԽՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՆԽԱՐԳԵՄԱՆ ԵՎ ԽԱՓԱՆՄԱՆ ՈՒՐՈՏՈՒՄ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

Հայաստանի Հանրապետության ոստիկանության և Չինաստանի ժողովրդական Հանրապետության հասարակական անվտանգության նախարարության միջև հանցագործությունների կանխարգելման և խափանման ոլորտում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը և Չինաստանի ժողովրդական Հանրապետության հասարակական անվտանգության նախարարությունը, այսուհետ՝ Կողմեր,
ձգտելով զարգացնել համագործակցությունը բարեկամությանը և փոխըմբռնմանը համահունչ,
ելնելով մարդու կյանքի, իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության, հասարակության և պետության շահերի պաշտպանությունն ապահովելու ձգտումից,
մտահոգություն հայտնելով հանցավորության, հատկապես դրա կազմակերպված ձևերի ծավալների աճով և միտումներով,
կարևոր նշանակություն տալով մարդու իրավունքների և ազատությունների համընդհանուր ճանաչման գործում միջազգային համագործակցությանը,
պահպանելով միջազգային իրավական նորմերը և իրենց պետությունների ներքին օրենսդրությունը, ինչպես նաև ղեկավարվելով հավասարության և փոխշահավետ համագործակցության սկզբունքներով,
համաձայնեցին հետևյալի մասին.

Հ ո ղ վ ա ծ 1

Համագործակցության ոլորտները

1. Կողմերը, համաձայն իրենց պետությունների ազգային օրենսդրության և սույն Համաձայնագրի դրույթների, կհամագործակցեն հանցագործությունների կանխարգելման և խափանման գործում, հատկապես՝ հետևյալ ոլորտներում.
- 1) քաղաքացու կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություններ,
 - 2) ահաբեկչության հետ կապված հանցագործություններ,
 - 3) զենքի, զինամթերքի, պայթուցիկ նյութերի, ինչպես նաև միջուկային և ռադիոակտիվ նյութերի հետ կապված հանցագործություններ,
 - 4) պոռնոգրաֆիկ նյութերի պատրաստման և տարածման հետ կապված հանցագործություններ, հատկապես՝ անչափահասների վերաբերյալ,
 - 5) մարդկանց, հատկապես կանանց և երեխաների թրաֆիկինգի, շահագործման և քաղաքացու ազատությունից զրկելու հետ կապված հանցագործություններ,
 - 6) մարդկանց օրգանների, հյուսվածքների, բջիջների անօրինական առևտրի հետ կապված հանցագործություններ,
 - 7) անօրինական միգրացիա,

- 8) հասարակական և պատմական նշանակություն ունեցող մշակութային արժեքների նկատմամբ հանցավոր ոտնձգություններ,
- 9) արժեթղթերի, փաստաթղթերի և վճարման էլեկտրոնային միջոցների կեղծում, անօրինական պատրաստում և տարածում,
- 10) ավտոտրանսպորտային միջոցների հափշտակում և նշված բնագավառում անօրինական գործունեություն,
- 11) հեռահաղորդակցման միջոցների օգտագործմամբ կատարված խարդախություն, ֆինանսական խարդախություն և հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացում,
- 12) թմրամիջոցների, հոգեներգործուն նյութերի և պրեկուրսորների ապօրինի շրջանառություն,
- 13) ինտերնետի բնագավառում կատարվող հանցագործություններ,
- 14) մտավոր սեփականության ոլորտում կատարվող հանցագործություններ,
- 15) շրջակա միջավայրի դեմ ուղղված հանցագործություններ:
2. Կողմերը կհամագործակցեն հետևյալ ուղղություններով.
- 1) հանցագործության կատարման մեջ կասկածվող անձանց հետախուզում և վտարում,
- 2) անհայտ անձանց, չճանաչված դիակների և անհետ կորած անձանց ինքնության նույնացում,
- 3) հանցագործության իրեղեն ապացույցների որոնման և տրամադրման գործում:

Հ ո ղ վ ա ծ 2

Համագործակցության ձևերը

- Կողմերի միջև համագործակցությունը կիրականացվի մասնավորապես՝
- 1) սույն Համաձայնագրի 1-ին հոդվածի 1-ին կետում թվարկված հանցագործությունների կանխարգելման և խափանման վերաբերյալ տեղեկատվության և փորձի փոխանակման միջոցով,
- 2) փորձագետների փոխանակման միջոցով, մասնավորապես՝ կրիմինալիստական հնարքների և հանցավորության դեմ պայքարի օպերատիվ մեթոդների և մարտավարության ոլորտներում,
- 3) հրատարակությունների, գիտական հետազոտությունների, վիճակագրական տվյալների փոխանակման միջոցով, ինչպես նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող և հրապարակման ենթակա ոլորտներում համատեղ գիտական հետազոտությունների արդյունքների վրա հիմնված իրավական նորմատիվների ներմուծման միջոցով,
- 4) հանցագործությունների նոր տեսակների, դրանց կանխման և հայտնաբերման մեթոդների ու ձևերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման միջոցով,
- 5) դասախոսությունների, խորհրդակցությունների, սեմինարների անցկացման, ինչպես նաև հատուկ ուսումնական հաստատություններում որակավորման բարձրացման եղանակով աշխատանքի փորձի փոխանակման միջոցով:

Հ ո ղ վ ա ծ 3

Գաղտնի տեղեկատվության պաշտպանությունը

1. Կողմերը կապահովեն, որ միմյանց փոխանցվող տեղեկատվության գաղտնիությունը պաշտպանվի: Նման տեղեկատվության գաղտնիության աստիճանը կարգավորվում է այն տրամադրող Կողմի ներպետական օրենսդրությամբ:
2. Միմյանց փոխանցված գաղտնի տեղեկատվությունը կարող է տրամադրվել երրորդ կողմի միայն տեղեկատվությունը տրամադրող Կողմի գրավոր համաձայնությամբ և չի կարող օգտագործվել այլ նպատակներով:
3. Գաղտնիության պահպանման անհնարինության կամ գաղտնի տեղեկատվության բացահայտման դեպքում մյուս Կողմը այդ մասին անհապաղ կտեղեկացնի տրամադրող Կողմին:

Հ ո ղ վ ա ծ 4

Հարցում

1. Սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունն իրականացվում է Կողմերի հարցումների հիման վրա:

2. Հարցումն ուղարկվում է գրավոր, այդ թվում՝ կապի տեխնիկական միջոցների օգնությամբ: Հրատապ դեպքերում հարցումը կարող է կատարվել բանավոր, սակայն երեք օրվա ընթացքում այն պետք է հաստատվի գրավոր:

3. Հարցում ստացած Կողմը կձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները հարցմանն արագ և սպառիչ պատասխանելու համար:

Հ ո դ վ ա ծ 5

Հարցման մերժումը

Սույն Համաձայնագրի շրջանակներում հարցման կատարումը կարող է մերժվել ամբողջովին կամ մասնակիորեն, եթե հարցում ստացած Կողմը կարծում է, որ դրա կատարումը կարող է վնաս հասցնել իր շահերին, անվտանգությանը և իր պետության ինքնիշխանությանը, ինչպես նաև՝ հասարակական կարգին, կամ հակասում է իր օրենսդրությանը կամ միջազգային պարտավորություններին:

Հարցման կատարումը մերժելու մասին որոշում կայացվելու դեպքում հարցում ուղարկած Կողմը այդ մասին գրավոր ծանուցվում է. ծանուցագրում նշվում են մերժման պատճառները:

Հ ո դ վ ա ծ 6

Ծախսեր

Կողմերն իրենք կկրեն այն ծախսերը, որոնք կարվեն սույն Համաձայնագրի կատարման ընթացքում, եթե յուրաքանչյուր առանձին դեպքի համար այլ կարգ չի սահմանվի:

Հ ո դ վ ա ծ 7

Լեզուն

Սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցություն իրականացնելու նպատակով Կողմերը կօգտվեն չինարենից, հայերենից և ռուսերենից:

Հ ո դ վ ա ծ 8

Վեճերի լուծումը

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման և կիրառման ընթացքում ծագած վեճերը կամ տարաձայնությունները Կողմերը կլուծեն անմիջական բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

Հ ո դ վ ա ծ 9

Փոփոխությունները և լրացումները

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել լրացումներ և փոփոխություններ, որոնք կձևակերպվեն սույն Համաձայնագրի անբաժանելի մաս կազմող առանձին արձանագրություններով, որոնք ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով:

Հ ո դ վ ա ծ 10

Եզրափակիչ դրույթներ

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի՝ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման ավարտը հավաստող վերջին ծանուցումը դիվանագիտական ուղիներով փոխադարձաբար ստանալուց հետո՝ երեսուն օրը լրանալու օրվանից:

2. Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով: Կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը մյուս Կողմին դիվանագիտական ուղիներով ծանուցելու միջոցով: Նման դեպքում սույն Համաձայնագրի գործողությունը դադարում է այդ ծանուցումը Կողմերից մեկի ստանալու ամսաթվից երեք ամիսը լրանալուց հետո:

Կատարված է Պեկին քաղաքում 2015 թվականի մարտի 25-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, չինարեն և ռուսերեն, ընդ որում՝ բոլոր երեք տեքստերը հավասարազոր են: Տարընթերցման դեպքում գերակայում է ռուսերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2016թ. փետրվարի 15-ին